ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ. «Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, *Երևան, «Անտարես» հրատ., 2014, 680 էջ:*

Վերջին տարիներին տպագրված պատմագիտական ուսումնասիրությունների շարքում շահեկանորեն առանձնանում է «Միրանույշ և Պողոս Արզումանյան» հիմնադրամի հովանավորությամբ վերջերս լույս տեսած ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Սուրեն Սարգսյանի ««Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում» հիմնարար աշխատությունը: Այն երկար տարիների տքնաջան պրպտումների արգասիք է և արժանիորեն վկայում է հեղինակի հասուն ու լրջմիտ պատմաբան լինելու իրողությունը:

«Արմենիա» պարբերականը, որը 1885 թ. հունիսի 18-ի շրջաբերականով ազդարարեց իր հրատարակվելու մասին, գոյատևեց մինչև 1923 թ., ունեցավ միայն մեկ խմբագիր՝ Մկրտիչ Փորթուգալյանը: Կ. Պոլսում ծնված Մ. Փորթուգալյանը XIX դարի 70-ական թվականների կեսերից հասարակական, կրթական-լուսավորչական, հայրենասիրական գործունեություն էր ծավալում Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգներում, մասնավորապես, Վանում, որի պատճառով թուրքական կառավարությունը նրան արտաքսում է Վանից: Խուսափելով ձերբակալվելու իրական վտանգից՝ նա հեռանում է Ֆրանսիա և Մարսել քաղաքում ձեռնարկում հայ քաղաքական առաջին պարբերականի՝ «Արմենիայի» հրատարակությունը:

Թե՛ Մ. Փորթուգալյանի գործունեության, թե՛ «Արմենիա» պարբերականի մասին հպանցիկ խոսել են XIX դարի երկրորդ կեսի իրադարձություններին անդրադարձած բազմաթիվ հետազոտողներ, հայրենիքի և Սփյուռքի գիտնականներ, սակայն այդ թեմայով առանձին ուսումնասիրություն, որքան էլ զարմանալի է, մինչ օրս չէր գրվել: Այդ բացը լրացնելու է գալիս պատմաբան Ս. Սարգսյանն իր այս աշխատությամբ, որտեղ առաջին անգամ քննության են առնվում պարբերականի լայնածավալ գործունեության բոլոր կողմերը կամ ուղղությունները:

Սույն մենագրությունը բաղկացած է առաջաբանից, չորս գլխից ու տասնմեկ ենթագլխից, վերջաբանից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից: Աշխատության մեջ բացահայտվում և քննարկվում են պարբերականի 1885–1908 թթ. լույս տեսած համարների հետ առնչվող անխտիր բոլոր հարցերը: Մեր դիտարկումներն էլ կներկայացնենք հենց այդ վերնագրումների

տրամաբանական հաջորդականությամբ:

Առանձնանում է հատկապես աշխատության Առաջաբանը, որն իր արժանիքներով կարող է համարվել կատարյալ Ներածության վառ օրինակ: Այստեղ հեղինակը բարձր մակարդակով ներկայացնում է թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, անդրադառնում ամբողջ XX դարի ընթացքում Մփյուռքում և հայրենիքում հրատարակված Մ. Փորթուգալյանի գործունեության առաջին շրջանին վերաբերող ուսումնասիրություններին և տալիս գիտական կարևոր գնահատականներ:

Առաջին գլուխը նվիրված է «քառասուն տարվա աշխատավոր» Մկրտիչ Փորթուգալյանի կյանքի առաջին շրջանին և մանկավարժական գործունեությանը: Այստեղ առավելապես ներկայացված է Վան-Վասպուրականում նրա ծավալած հայրենանվեր գործունեությունը, որի ընթացքում □առանց երբեւէ հեղափոխութիւն բառն արտասանելու□ Մ. Փորթուգալյանը դաստիարակեց հայրենիքի համար անձնազոհության պատրաստ հեղափոխական մի ողջ սերունդ:

Հիրավի արժեքավոր այս աշխատության երկրորդ գլուխը նվիրված է «Արմենիա» պարբերականի ծննդյան, նրա ընդհանուր նկարագրի և «Արմենիա»–Արմենական կուսակցություն առնչությունների բացահայտմանը: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվում և մանրակրկիտ լուսաբանվում մինչ թերթի լույս ընծայումը վիմագիր տեսքով տարածված «Շրջաբերականը», որտեղ Ս. Սարգսյանը նախանձելի բարեխղճությամբ ներկայացնում է նրանում տեղ գտած այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք էին ապագա լրագրի նպատակը և նրանում քննարկվելիք մյուս բոլոր հարցերը: Այնուհետև կոչ է արվում աշխարհասփյուռ ողջ հայությանը, որ իր ակտիվ մասնակցությունը բերի հայ ազգային-ազատագրական պայքարի գործի կազմակերպմանն ու իրագործմանը:

Գնահատելի է հատկապես այն փաստը, որ Ս. Սարգսյանը նախանձախնդրորեն և նյութի գերազանց իմացությամբ լուսաբանում է հայ պատմագիտության մեջ բազմաթիվ տարակարծությունների տեղիք տված «Արմենիա» թերթ–Արմենական կուսակցություն առնչությունները: Պատասխանելով «բաց մնացած» այդ հարցախմբին՝ շեշտում, որ թեև Մ. Փորթուգալյանը ժխտում էր կուսակցության հետ որևէ կերպ իր առնչությունը, սակայն դա չէր խանգարում, որ տարիներ շարունակ «Արմենիան», փաստորեն, լիներ Արմենական կուսակցության գաղափարատարածիչն ու անպաշտոն տպագիր օրգանը :

Նշենք, որ գրքի հաջորդ բաժնում հեղինակը՝ հետազոտողին վայել պատշաճ մակարդակով, առաջին անգամ գնահատում է «Արմենիայի» դերը հայ ազգային-ազատագրական պայքարում և պարբերականի ընդհանուր նկարագիրը բացահայտելուն զուգընթաց ներկայացնում, թե ինչպես է Մ. Փորթուգալյանն իր հեղինակային հոդվածներով մանրակրկիտ քննարկել Արևմտյան Հայաստանի ծանր կացության պատճառները, վերլուծել հայ իրականության և հանրային կյանքի բացասական երևույթները:

Ս. Սարգսյանը յուրահատուկ սիրով ու խանդաղատանքով է ներկայացրել թերթի «Նամականի» բաժինը, որտեղ անդրադառնում է Արևմտյան Հայաստանից ստացած թղթակցութ-

յուներին, նշում ծածկանունով հեղինակներին և փորձում բացահայտել նրանց կրողներին, իր համաձայնությունը կամ անհամաձայնությունը հայտնում վերջիններիս հայտնած տեսակետներին:

Աշխատության վերջին՝ «Արևմտյան Հայաստանի ինքնորոշման հայեցակետը «Արմենիա» պարբերականի էջերում» գլխում մանրամասնորեն ներկայացվում է այն գործընթացը, թե ինչպես Մ. Փորթուգալյանը խմբագրականներում և հեղինակային այլ հոդվածներում ընթերցողին մատուցում է իր աշխարհայացքային մոտեցումներն արևմտահայության ազատագրության, Արևմտյան Հայաստանի ինքնորոշման խնդիրների նկատմամբ: Քննարկում է և իր անաչառ վերաբերմունքն արտահայտում հայ իրականության մեջ գործող ազգային կուսակցությունների գործելակերպի վերաբերյալ, դրանց զուգահեռ գնահատում Հայկական հարցում մեծ տերություններից յուրաքանչյուրի ունեցած դերակատարությունն ու դիրքորոշումները: Ս. Սարգսյանն էլ անաչառ մակարդակով քայլ առ քայլ ներկայացրել ու գնահատել է այդ ազգանվեր գործունեությունը՝ երբեմն նաև իր անհամաձայնությունները հայտնելով Մ. Փորթուգալյանի դրսևորած բռնկուն պահվածքին ու կոչերին:

Մենագրության հեղինակի գիտական բարձրակարգ դրսևորում կարելի է համարել նաև աշխատության «Վերջաբանը»: Այստեղ պատմագիտության լավագույն ավանդույթներին հավատարիմ՝ Ս. Սարգսյանը հակիրճ, սակայն խորությամբ ամփոփում է աշխատության կարևորագույն խնդիրները և ներկայացնում իր եզրահանգումները: Հեղինակն արժևորում է Արևմտյան Հայաստանում տիրող անմխիթար վիճակի և դրանից դուրս գալու վերաբերյալ «Արմենիա» թերթի ու նրա անփոփոխ խմբագրի տեսակետները, որոնք կարևոր էին ու փնտրված մեր ազգային-ազատագրական գաղափարախոսության ու, ընդհանրապես, հայ պատմագիտության մեջ:

Աշխատության մեջ բարձրացված հարցերը մեծաքանակ են, սակայն առանձնահատուկ ուզում ենք ընդգծել կից հրատարակած՝ երկու մասից բաղկացած Հավելվածի արտակարգ կարևորությունը: Աշխատության հեղինակը տքնաջան աշխատանք է կատարել վերջինիս հրատարակման հետ կապված: Առաջին հավելվածը Մ. Փորթուգալյանի □Շրջաբերականն□ է, որտեղ, ինչպես նշեցինք, լուսաբանվել էր հրատարակվելիք «Արմենիայի» նպատակը և ուղղությունը: «Տաճկահայաստանին, Պարսկահայաստանին և Ռուսահայաստանին քաջածանոթ» Մ. Փորթուգալյան-հեղինակի խոսքերով՝ ով «ամեն բան նույնիսկ մեր աչքերով տեսած լինելու համար» (էջ 269), իրավունք չունի հուսախաբության մատնել իր ընթերցողներին և պարտավոր է բոլոր հարցերը քննարկել և գնահատել անաչառությամբ:

Ավելի կարևոր ու ընդգրկուն է երկրորդ Հավելվածը, որտեղ ամփոփված է «Արմենիայի» 1885–1908 թթ. ժամանակահատվածի կարևոր հոդվածներից բաղկացած ընտրանին (400 էջ՝ 274–676)՝ թվով 25 հեղինակի (այդ թվում՝ ծածկանուններով) մոտավորապես 20 հոդված և խմբագրի՝ հեղինակային ու խմբագրական 140-ից ավելի հոդվածներ: Տվյալ Հավելվածը կազմելու դժվարագույն լուծումը վկայում է հեղինակի որոնողական, հետազոտական հիանալի հատկանիշների մասին և ընդգծում

նրա կատարած հսկա աշխատանքը: Ծանոթությունը հոդվածների այս ընտրանուն լիակատար իրավունք է տալիս ըստ արժանվույն գնահատել «Արմենիայի» խմբագրի գործունեությունը և հետո՝ շնորհակալություն հայտնել աշխատության հեղինակին, թե՛ արժեքավոր այս ուսումնասիրության և թե՛ բարձր մակարդակի Հավելվածի համար:

Վերջում ավելացնենք հետևյալը. համոզված ենք, Ս. Սարգսյանը կշարունակի «Արմենիային» նվիրված ուսումնասիրությունը և, ներառելով նաև 1908–1923 թթ. լույս տեսած համարների վերլուծությունը, տրամաբանական ավարտին կհասցնի և լիակատար ու ամբողջական կներկայացնի պարբերականի պատմությունը: Այս հարցն ավելի քան կարևոր է, քանի որ եթե «Արմենիայի» ու նրա խմբագրի գործունեության առաջին շրջանի մասին պատմագիտության մեջ որոշ տեղեկություններ ու հրապարակումներ կան, ապա վերոնշյալ շրջանի մասին բացարձակապես ոչ մի խոսք, որևէ հիշատակություն մինչ օրս չկա:

Ս. Սարգսյանի այս ուսումնասիրությունը, կրկնենք, վերջին տարիների ամենահաջողված պատմագիտական աշխատություններից է: Այն նաև արդիական, շնորհակալ և ազգանվեր գործ է, որովհետև դրանում բարեխիղճ, գիտական պատշաճ մակարդակով ու համոզիչ ներկայացված է այն պարզ և միակ ճշմարտությունը, որ հայ ժողովրդի ազատագրական գաղափարախոսությունն անմիջական արդյունք ու ծնունդ էր արևմտահայ իրականության և միանգամայն արժանի պատասխան սին ու դատարկ այն բոլոր պնդումներին, որ դրանք, իբր, թելադրված են եղել դրսից՝ օտարների կողմից:

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂԱՄԲԱՐՅԱՆ